25-ՐԴ ՆԻՍՏ

11 հոկտեմբերի 1918թ.

Նիստը բանալով՝ նախագահը հայտարարում է հետևյալ օրակարգը.

1. Գաղթական որբերի խնամատարության օրինագծի վերջնական հաստատում.
2. Քաղաքի հողերը կապալով տալու օրինագծի վերջնական հաստատում.
3. Օրինագիծ դատաստանական վճիռների հայտարարման ձևի մասին.
4. Գաղթականական օգնության նախահաշիվը.
5. Պառլ[ամենտի] քննիչ հանձնաժողովի զեկուցում.
6. Պարենավորման հանձնաժողովի զեկուցում.
7. Բժշկա-սան[իտարական] հանձնաժողովի զեկուցման շարունակություն.
8. Պետական հաշվետեսի ընտրություն.
9. Կառավարության պատասխանը հարցերին.
10. Ընթացիկ գործեր:

Պատգ. Զուբյանը կարդում է օրինագծեր՝ գաղթական որբերի խնամատարության և տեղային ինքնավարության հողերը կապալով տալու մասին, որոնք վերջնականապես հաստատվում են:

Պատգ. Ս. Տեր-Մարտիրոսյան. զեկուցանում է գաղթականական օգնության նախահաշվի մասին, հայտնում է, որ ֆին. կոմիսիան նկատի ունենալով, որ ծմեռը մոտենում է և անհրաժեշտ է շտապեցնել գաղթ[ականների համար] բնակարան ճարելու և որբերը պատսպարելու անհետաձգելի գործերը, առաջարկում է նախահաշիվը շտապողական ճանաչել: Առաջարկն ընդունվում է: Զեկուցանում է, որ համաձայն վերջին մարդահամարի, ռուսահայ գաղթ[ականների] ընդհանուր թիվը հասել է 180.000-ի, թուրքահայ գաղթականության՝ 150.000-ի, ընդամենը 330.000 հոգի: Այս թիվը բաժանված է երեք հատվածի. ա. մոտ 1/3-ը ունի սեփական միջոցներ և առանց օգնության կարող է ապրել, բ. 62.500 հոգի կարող են ապրել սեփական աշխատանքով, գ. մնացած մասը առանց պետական օգնության չի կարող յուր գոյությունը պահպանել և ունի հետևյալ պատկերը:

1. Որբեր՝ 1. 10000,
2. Անճարներ՝ 25000,
3. Անկյալներ՝ 1000,
4. Մասնավոր օգնության կարիք ունեցողներ՝ 26000 հոգի:

Սրանց օգնության նախահաշիվը կազմված է հետևյալ ձևով.

1. Որբանոցներ. նախնական կահավորման, անկողնի, մահճակալի և այլնի համար յուրաքանչյուր որբին՝ 234 ռ.: Այս թվի վրա եթե ավելացնենք նաև որբանոցների կահկարասին, կունենանք յուրաքանչյուր որբին՝ մոտ 400 ռ.: Հագուստի-աղջիկ որբին 123 ռ., տղային՝ 118 ռ.: Ուրեմն՝ որբանոցային գործի կազմակերպման համար միանվագ 3.000.000 ռ., բացի դրանից, սկսած հոկտ. ամսի 1-ից յուրաքանչյուր որբին սնունդի համար՝ 150 ռուբլի:

2. Անճարներ և աննեցուկներ. սրանց օգնությանը ենթադրվում է տալ հետևյալ ձևը. յուրաքանչյուր շնչին օրական 1 ֆ. կարտոֆիլ և 60 կ. փող, այս հաշվով ամսական կարտոֆիլի արժեքը՝ 448.750 ռ., նպաստը՝ 450.000 ռ., ընդամենը երեք ամսվա համար՝ 2.756.000 ռ.:

3. Ավերված գյուղերը նորոգելու համար-ավերված գյուղերում 1000 տուն շինելու համար տալ յուրաքանչյուրին 20 գերան և 150 ռ.: 9000 ընտանիքի էլ տալ միայն 20 գերան. այս ծյուղի համար հարկավոր է ընդամենը 2.180.000 ռ., հաշվելով նաև գերանի արժեքը:

4. Բժշկասանիտարական գործի համար ամսական նախատեսվում է 130.000 ռ., հինգ ամսվա համար (սկսած օգոստոս ամսից)՝ 650.000 ռ.:

5. Չնախատեսված ծախսեր՝ ամսական 100.000 ռ.:

6. Որբանոցներին ավանս՝ կես միլիոն ռ., ընդհանուր գումար՝ 13.886.000 ռ.:

Ֆինանսական կոմիսիայի կարծիքով թվերը շատ խնայողական են և ընդունելի՝ առանց առարկության. միայն որովհետև թվերը կարող են փոփոխական լինել, հանձնաժողովն առաջարկում է ծախսերը կատարել համաձայն թվերի:

Գալով վերջին կետին՝ որբանոցներին ավանս տալ կես միլիոն ռ., որովհետև այս գումարը մանրամասն ներկայացված չի, կոմիսիան կարծում է, որ ամբողջ նախահաշվի մեջ պիտի մերժել միայն այդ կետը:

Պատգ. Ս. Խաչատրյան համաձայն է վերջին կետը մերժելու հետ, որովհետև նման ձևով ավանս տալ չի կարելի: Գալով ամբողջ օրինագծին, հայտնում է, որ նա յուր մեջ տարակուսանք է առաջ բերում, թե նշանակված թվերը, համեմատաբար արդյոք չնչին չե՞ն: Համաձայն է նախահաշվի հետ, միայն կասկածում է, որ գումարները չնչին են կարիքի նկատմամբ: Ուստի առաջարկում է նախահաշիվը վերադարձնել հանձնաժողովին՝ ավելի լավ մշակելու համար:

Ներքին գործոց մինիստրը հայտնում է, որ նախահաշիվը կազմված է գաղթականական կոմիսիայի հետ միասին: Նա սկզբում ավելի էր. ընդհանուր գումարը հասնում էր 28 միլիոն ռ., սակայն կոմիսիան կրճատեց մոտ 14 միլիոն և ինքը համաձայնեց: Այն առաջարկությունը, թե գումարները շատ քիչ են, ճիշտ է, բայց պետք է նկատի ունենալ, որ գները հաշված են պետական գներով: Խնդրում է վերջին կետը՝ կես միլիոն ավանսի մասին, չմերժել, որովհետև դա պարտքերը վճարելու համար է և կվճարվի հետևյալ ձևով. չարաշահություններից խուսափելու համար ես կվերցնեմ գաղթ[ականական] մարմիններից նրանց պարտքերի

ցուցակը ու կվճարեմ: Եթե մերժեք այդ կետը, պարտքեր ունեցողները, որոնք ընդհանրապես հին որբանոցներն են, կծախեն իրենց մթերքները:

Պատգ. *Ս. Մամիկոնյանի* կարծիքով, իբր ավանս ներկայացված կես միլիոնի դեմ մանրամասն հաշիվ պահանջել անհնար է. շատ որբանոցներ ոչինչ չեն ստացել. մի քանիսը ստացել են 30 ռ. և քչերը միայն 74 ռ.՝ յուրաքանչյուր որբին ամսական: Համաձայն չի ներքին գործոց մինիստրի առաջարկած ձևի հետ՝ պարտքերը վճարելու համար, այլ պետք է վճարել ամսական յուրաքանչյուր որբին որոշ գումարի հաշվով, ինչպես անում էր ռուսական կառավարությունը: Ավելորդ է համարում հիվանդանոցային ծյուղը հիշել այս նախահաշվի մեջ, որովհետև հիվանդանոցները միևնույն պետք է լինեն և՛ բնիկի, և՛ գաղթականի համար և նրանց համար մտցվելու է առանձին նախահաշվով: Հետո առաջարկում է որբանոցների օգնությունը՝ ամսական 150 ռ. յուրաքանչյուր որբին, հաշվել ոչ թե հոկտեմբեր, այլ սեպտ. ամսի 1-ից:

Պատգ. Ավդալբեկյանը առաջարկում է ընդունել նախահաշիվը ամբողջությամբ, բացի երկու կետից. կես միլիոն ավանսի, որը մանրամասն ներկայացված չէ, և բժշկասանիտարական մասի, որը պառ[ամենտի] կոմիսիան մասնագիտորեն չի քննել: Գտնում է, որ մնացած կետերը, օր., որբանոցային, կազմված են շատ մանրամասն, խնամքով և մասնագիտորեն:

Ներքին գործոց մինիստրը հայտնում է, որ գաղթ. մարմինների լիկվիդացիան կատարելու համար անհրաժեշտ է կես միլիոնը, այլապես գործը կձգձգվի ու պետական գանձարանը կտուժի: Հայտնում է, որ որբանոցային նպաստը հաշվում է հոկտեմբերից, որովհետև սեպտ[եմբերին] բոլոր որբանոցները ձրի հաց են ստացել: Գալով հիվանդանոցների առանձին հիմնելուն, հայտնում է, որ ինքը համաձայն էր, բայց բժշկա-սանիտարական կոմիսիան անհրաժեշտ գտավ առանձին պահել:

Պատգ. Հ. Տեր-Հակոբյանը թեև համաձայն է վճարելու կես միլիոն ավանսը, բայց առաջարկում է հանել այս նախահաշվից ու ներկայացնել առանձին:

Ներքին գործոց մինիստրը հայտնում է, որ ինքը հանում է նախահաշվից այդ կետը՝ առանձին ներկայացնելու համար:

Ապա ձայների մեծամասնությամբ անցնում է նախահաշիվը, բացի բժշկասանիտարական մասից, որը Ավդալբեկյանի առաջարկությամբ և 12 ձայնով ընդդեմ 6-ի, այս նախահաշվից հանվում է:

Պատգ. Մուշեղյանը պարենավորման հանձնաժողովի կողմից զեկուցանում է, որ հանձնաժողովը անհրաժեշտ է համարում պարբերաբար ինֆորմացիոն ձևով տալ զեկուցումներ. Ղարաքիլիսան և շրջանը, ըստ տեղեկությունների, կարող են շուտով մեզ վերադառնալ, բայց շատ աննախանձելի պայմաններում, այնպես որ դա ոչ մի պլուս չի ավելացնի, այլ մի ծանր բեռ կլինի մեր պարենավորման գործի վրա: Անհրաժեշտ է այժմյանից ուշադրություն դարձնել այդ հանգամանքի վրա ու հարկավոր նախապատրաստություններ անել: Ընդհ. կերպով պարեն. կոմիսիայի կողմից քննված են հացի, աղի, մսի, շաքարի և ճարպի հարցերը:

Հացի մասին որևէ կոնկրետ առաջարկություն բերել չենք կարող. նկատի ունենալով, սակայն, որ եթե յուրաքանչյուր անհատին տալու լինենք կես ֆունտ հաց, բացի դրանից և պակասը լրացնենք կարտոֆիլով, կրկին մեզ հարկավոր կլինի մեկ միլիոն փութ հաց, որ ո՛չ մի միջոցով մենք ճարել չենք կարող, եթե հանգամանքները չփոխվեն:

Անընդհատ լուրեր են ստացվում, որ մեր երկրից թուրքական ագենտները մաքսանենգությամբ արտահանում են մեծ քանակությամբ մսացու անասուններ:

Օրական, մսի կարիքները հոգալու համար, հարկավոր է մեզ 700 անասուն, ուստի արտահանումը շատ վատ կազդի մեր պարենավորման դրության վրա: Ուստի մենք առաջարկում ենք սահմանագծի հսկողությունը խստացնել և մտածել անասունների կերի մասին, որովհետև հակառակ պարագայում նրանք ոչնչացման կենթարկվեն:

Պարենավորման բաժանմունքը փաստորեն աղ չունի, իսկ ժողովրդի մեջ եղած աղը կբավականացնի մաքսիմում մեկ ամիս: Մարդկանց, կենդանիների,

կաշեգործների և կարիքների համար մեզ հարկավոր է ամսական 30.000 փ. աղ: Այդ ձեռք բերելու համար կառավարության համապատասխան մարմինները աշխատում են: Թուրքաց կառավարությունը ևս խոստացել է մեզ 50.000 փ. աղ, որը դեռ չենք ստացել: Համենայն դեպս դա կբավականացնի 1½ ամիս: Հայտնում է նաև, որ Սարդարապատի կռիվներին Երևան է փոխադրված 160.000 փ. աղ և շտապով, առանց կշռելու, հանձնված է մի մասնավոր անհատի՝ պահելու համար: Այժմ այդ աղից ծախվել է 4.700 փ., փաստերն ասում են, որ այդ աղը ծախվել է: Գործը հանձնված է դատարանի:

Շաքարի հարցը այնքան էլ սուր բնույթ չունի, որովհետև առանց շաքարի կարելի է ապրել: Առաջվա հաշվով մեզ հարկավոր կլինի կես միլիոն փ. շաքար, որը ստանալ անհնար է: Կարիքը դոշաբով բավարարել չի կարելի, որովհետև հազիվ ստանանք 10.000 փ. դոշաբ: Ապա հայտնում է, որ կոմիսիան մտցրել է մի օրինագիծ՝ Դիլիջանի անտառների խոզակաղինն ու աճարի պտուղը հավաքելու: Առաջինը անասուններին կերցնելու, երկրորդը՝ ճարպ պատրաստելու համար:

Պատգ. Գ. Տեր-Հակոբյանը զեկուցանում է բժշկասանիտարական հանձնաժողովի կողմից: Շեշտում է, որ կարելի է Հայաստանի տերիտորիան, բացի Երևան քաղաքից, հայտարարել խոլերի կողմից աննպաստ հանգամանքներում: Ինչպես նաև առաջարկում է շուտով մտցնել սանիտարական տուրք և Թիֆլիսից բերել դեղորայք:

Պատգամավորներն անում են մի քանի լրացումներ ու տալիս են հարցեր, որոնց պատասխանում է զեկուցանողը:

Մինիստր նախագահ Քաջազնունին պատասխանում է Ս. Հ. ֆրակցիայի հետևյալ հարցումին, թե ճի՞շտ է, որ կառավարությունը որոշել է Դիլիջան-Ղարաքիլիսա-Ջալալօղլի շրջանում մտցնել զինվորական վարչություն: Հայտնում է, որ այդ ճիշտ չէ և որ Դիլիջան-Ղարաքիլիսա շրջանը միացվել է. այդ շրջանի իշխանության գլուխ կանգնած կլինի մի զինվորական, որը կունենա յուր օգնականը քաղաքացիական գործերի համար: Այս փաստը կատարված է, նկատի ունենալով, որ այդ շրջանները զինվորական շրջաններ են:

Պատգ. Զուբյանը հայտնում է, որ դա պառլ[ամենտական] իրավունքների խախտումն է, նոր վարչական բաժանումներ կարելի է անել միայն օրենսդրական ճանապարհով:

Ներքին գործոց մինիստրի բացատրություններից հետո, նույն խնդրի առթիվ *պատգ. Խոնդկարյանը* հայտնում է, որ յուր ֆրակցիան չի բավարարվում և հարցումը փոխում է հարցապնդման:

Բ. հարցումին, թե կառավարությունը ի՞նչ է արել Դիլիջանում հավաքված այսպես կոչված զեմստվոյական ժողովի վերաբերյալ, մանրամասն պատասխան է տալիս ներքին գործոց մինիստրը:

Ապա կարդացվում է նույն խնդրի առթիվ Ս. Հ. ֆրակցիայի հարցապնդումը: Հարցապնդումը պաշտպանում է

Պատգ. Խոնդկարյանը. Նրա առաջարկով հարցապնդումը ընդունվում և համարվում է շտապողական:

Ապա զինվորական մինիստրը պատասխանում է այն հարցումին, թե հայկական զորամասերին կից խմբեր գոյություն ունե՞ն, արդյոք, թե՞ ոչ: Հայտնում է, որ խմբերը օգ[ոստոսի] 15-ից սկսած լուծված են, բացի Պանդուխտի խմբից, որը լուծված է հոկտ. 1-ից:

Պետական հաշվետեսի ընտրությունը հետաձգվում է և նիստը փակվում է:

«Կառավարության լրաբեր», 15 հոկտեմբերի 1918թ.